Գիտություն

ՀՈՒՆԻՍ
№ 6
(354)
2021 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Ընտրվեցին ՀՀ ԳԱԱ-ն նոր նախագահ, փոխնախագահ և ակադեմիկոս-քարտուղար



Հունիսի 28-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահի, փոխնախագահի և ակադեմիկոս քարտուղարի ընտրություններ:

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում առաջադրվեց 3 թեկնածու՝ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ակադեմիկոս էդուարդ Ղազարյանը: Առաջին փուլում ոչ մի թեկնածու բավարար ձայն չհավաքեց: Երկրորդ փուլում 55 կողմ, 34 դեմ, 5 անվավեր ձայների հարաբերակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում ընտրվեց ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահ Աշոտ Սաղյանը ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում առաջադրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանի թեկնածությունը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում առաջադրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանի թեկնածությունը: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում 80 կողմ, 12 դեմ ձայների հարաբերակցությամբ ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում ընտրվեց Հրանտ Մաթևոսյանը: Արթուր Իշխանյանն ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում 80 կողմ 12 դեմ ձայների հարաբերակցությամբ:

Հունիսի 29-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի կունենան ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարների ընտրությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ նախագահության ընտրությունների արդյունքների ամփոփում

Սույն թվականի հունիսի 28-ին և 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) ընդհանուր ժողովն ընտրեց ՀՀ ԳԱԱ նախագահ, փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար, բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ և նախագահության անդամներ:

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

Աշոտ Սաղյանը ծնվել է 1957 թ.-ին՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: 1978 թ.-ին գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետը: 1980-1984 թթ.-ին սովորել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում:

Աշոտ Սաղյանն իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1985 թ.-ին, դոկտորականը՝ 1996 թ.-ին: 2006 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Նրա գիտական գործունեության բնագավառն է ոչ սպիտակուցային ամինաթթուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզը, մանրէաբանական սինթեզի կուլտուրալ հեղուկներից ամինաթթուների անջատումը և մաքրումը: Աշոտ Սաղյանը շուրջ 350 գիտական հոդվածի, 2 դասագրքի, 2 մենագրության հեղինակ է:

Աշոտ Սաղյանն աշխատել է ԽՍՀՄ Բժշկական և մանրէաբանական արդյունաբերության նախարարության գենետիկայի և սելեկցիայի համամիութենական ինստիտուտի Չարենցավանի մասնաճյուղում, այնուհետև՝ Ամինաթթուների գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտում, որը ԽՍՀՄ փլուզումից հետո վերանվանվել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում: 2000թ-ին նշանակվել է ինստիտուտի տնօրեն: 2010 թ-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն: Աշոտ Սաղյանը 1998 թ.-ից աշխատում է նաև Երևանի պետական համալսարանում՝ սկզբում որպես դեղագործական քիմիայի ամբիոնի դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր, իսկ 2003 թ.-ից՝ ամբիոնի վարիչ: 2016 թ.-ին դեղագործական քիմիայի ամբիոնի հենքի վրա ստեղծվել է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ, որի տնօրենն է նշանակվել Աշոտ Սաղյանը:

Նա 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար է:

2001 թ. Աշոտ Սաղյանն արժանացել է Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակի: 2002 թ. պարգևատրվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարական «Բարեկամություն» շքանշանով: 2004 և 2011 թթ.-ին արժանացել է ՀՀ նախագահի մրցանակների, 2009 թ.-ին՝ ՀՀ վարչապետի հուշամեդալի: 2014 թ.-ին ստացել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 2015թ-ին արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

Իր ելույթում ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահը խոսեց առաջիկա անելիքների մասին՝ մասնավորապես նշելով ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտահետազոտական ուղղությունների և մարդկային ներուժի օպտիմալացման, ռազմատեխնիկական ոլորտում գիտահետազոտական գործունեության արդիականացման, կիրառական բնույթի հետազոտությունների, համակարգի աշխատակիցների սոցիալական հարցերի հնարավոր լուծումների, միջազգային համագործակցության ընդլայնման, հայագիտության զարգացման խթանման, բուհական համակարգի հետ համագործակցության ընդլայնման, ԳԱԱ համակարգի ներուժի երիտասարդացման մասին:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը: Նա ծնվել է 1947 թ.-ին՝ Երևանում: 1970 թ.-ին ավարտել է ԵՊՀ-ի Ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացումը՝ պլազմայի ֆիզիկա: 1977թ-ին ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան, 1997թ-ին՝ դոկտորի: 2010թ-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հրանտ Մաթևոսյանը 2011-2021 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, 2011 թ-ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, ՀՀ ԳԱԱ գիտության զարգացման հիմնադրամի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի բաժնի վարիչ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանը: Նա ծնվել է 1960 թ.-ին՝ ԼՂՀ Շոշ գյուղում: 1983 թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը: 2004 թ.-ին ստացել է Ֆիզիկամաթեմատիկական դոկտորի կոչում: 2006 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Արթուր Իշխանյանի գիտական գործունեության բնագավառն է՝ ատոմական, մոլեկուլային և օպտիկական ֆիզիկա, մակերևութային ֆիզիկա, քվանտային սակավավիճակ համակարգեր, գերսառը ֆոտոն և մագնիսաասոցիացիա, ոչռելյատիվիստական և ռելյատիվիստական ալիքային հավասարումներ, ոչգծային ֆիզիկա, մաթեմատիկական ֆիզիկա, Հոյնի ֆունկցիաների տեսություն:

1994-2005 թթ. Արթուր Իշխանյանը եղել է ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի գիտքարտուղար, 2005-2006 թթ.՝ ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար: Նա 2007 թ.-ից ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի «Նյութական ալիքների ֆիզիկայի» լաբորատորիայի վարիչն է:

2015 թ.-ին Արթուր Իշխանյանն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը: ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը: ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Թավադյանը: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռադիկ Մարտիրոսյանը, Աշոտ Մելքոնյանը, Գեղամ Գևորգյանը, Գագիկ Ղազինյանը, Գևորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արսեն Հախումյանը, Վազգեն Մելիքյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի առաջարկությամբ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը դարձավ ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում ընդունեց ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտն անվանակոչել Միքայել Տեր-Միքայելյանի անվամբ

Սույն թվականի հունիսի 16-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում ընդունեց ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտն անվանակոչել Հայաստանում լազերային ֆիզիկայի ուղղության հիմնադիր, ինստիտուտի առաջին տնօրեն, ակադեմիկոս Միքայել Տեր-Միքայելյանի անվամբ:

Ականավոր գիտնական Միքայել Տեր-Միքայելյանը մեծ ավանդ է ունեցել Հայաստանում լազերային ֆիզիկայի զարգացման և ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ստեղծման և կայացման գործում:

1960-ականների սկզբին Միքայել Տեր-Միքայելյանն իր գիտելիքներն ու կազմակերպչական ունակություններն ուղղել է Հայաստանում լազերային ֆիզիկայի զարգացմանը: Կարճ ժամանակում նրան հաջողվել է ստեղծել գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի միացյալ ճառագայթային լաբորատորիա, որի հիման վրա 1967 թ. ստեղծվել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը (ՖՀԻ): Միքայել Տեր-Միքայելյանը դարձել է ինստիտուտի տնօրեն և աշխատել այդ պաշտոնում մինչև 1994 թ., որից հետո մինչև կյանքի վերջ՝ 2004թ., եղել է ինստիտուտի պատվավոր տնօրենը: Նրա գլխավորությամբ ՖՀԻ-ում իրականացվել են աշխատանքներ՝ ներառելով լազերային ֆիզիկայի տեսական և փորձարարական սկզբունքները, պինդմարմնային լազերային նյութագիտությունը, լազերային ճառագայթման ոչ գծային փոխազդեցությունը նյութի հետ, օպտիկական կապը: Այդ աշխատանքները լայն ճանաչում են ստացել և ըստ արժանվույն գնահատվել միջազգային գիտական հանրության կողմից:

Միքայել Տեր-Միքայելյանի ջանքերով ՖՀԻ-ում ձեռնարկվել և ղեկավարվել են աշխատանքներ բարձրջերմաստիճանային գերհաղորդականության, քվանտային ինֆորմացիայի և աշխարհում նոր ձևավորվող ուղղություններով:

Միքայել Տեր-Միքայելյանի ակտիվ մասնակցությամբ արդյունաբերական լազերների ստեղծման աշխատանքներին են ներգրավվել Հայաստանի մի շարք ձեռնարկություններ՝ Կիրովականի քիմիական կոմբինատը, Արզնիի ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանը, Երևանի էլեկտրալամպերի գործարանը: Գիտական հետազոտությունների և տեխնոլոգիական նպատակներով կիրառվող լազերների մշակման, արդյունաբերական յուրացման աշխատանքների շարքի համար ակադեմիկոս Տեր-Միքայելյանը, ի թիվս Արզնիի «Բյուրեղ» ԳԱՄ-ի, ռադիոօպտիկայի համամիութենական ԳՀԻ-ի և ՀԽՍՀ ԳԱ ՖՀԻ-ի մի խումբ աշխատակիցների, 1980-ին արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Միքայել Տեր-Միքայելյանը Հայաստանում ստեղծել է լազերային ֆիզիկայի համաշխարհային ճանաչում ստացած գիտական դպրոց: Այսօր այդ դպրոցի ներկայացուցիչները հաջողությամբ աշխատում են Հայաստանի ու արտերկրի այլ առաջատար կենտրոններում:

Ակադեմիկոս Տեր-Միքայելյանը լայն ճանաչում ստացած բազմաթիվ գիտական մենագրությունների, ակնարկների և հոդվածների հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել

80 տարի առաջ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հայ ժողովուրդը ակնառու մասնակցություն է ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմին, ավելի քան կես միլիոն հայեր մասնակցել են մարտական գործողություններին: Մոտ 300 հազարը զոհվել է կամ կորել անհետ: Այս ցուցանիշով մեր ժողովրդի կրած կորուստները համեմատելի են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կրած կորուստներին: Քաջ հայտնի է, որ հայերի հերոսական մասնակցության պատճառներից գլխավորն այն է եղել, որ Հայոց ցեղասպանությունից հրաշքով վերապրած հայերի զավակները մինչև վերջ մարտնչում էին, որպեսզի թույլ չտային Գերմանիայի դաշնակից Թուրքիային մտնել Խորհրդային Հայաստան: Խորհրդա-թուրքական սահմանին հայկական ԽՍՀ-ում տեղակայված 26 դիվիզիաները այդպես էլ չներգրավվեցին մարտերում, որովհետև պարզ դարձավ, որ Կովկասի համար և Ստալինգրադում ճակատամարտերից հետո թուրքերը չեն համարձակվելու պատերազմ հայտարարել Խորհրդային Միությանը: Այդ պատերազմի ամենաթեժ օրերին՝ 1943 թ., ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի առաջին պրեզիդենտը ականավոր հայագետ Հովսեփ Օրբելին էր: Պատերազմի տարիներին էր, որ որոշում ընդունվեց զարգացնել փոքրիկ հանրապետության արդյունաբերական հզորությունները և Հայաստանը բռնեց ինդուստրիալ-ագրարային հանրապետություն դառնալու պատվավոր ճանապարհը: Թշնամին ոտնակոխ չարեց մեր հանրապետությունը: Գիշեր-ցերեկ աշխատող ու արարող մեր պապերն ու տատերը քարտերով ստացվող սև հացով և շաքարով ջանք չէին խնայում օգնելու ռազմաճակատին: Սփյուռքում ապրող մեր եղբայրների ու քույրերի համար նույնպես այդ պատերազմը օտար պատերազմ չէր: Այն հայերը, որոնք սիրում էին Հայաստանը անկախ նրանում եղած քաղաքական համակարգից և պատրաստ էին նեցուկ կանգնելու իրենց հայրենիքին, նույնպես ակնառու մասնակցություն ունեցան խորհրդային բանակի հաղթանակը անշրջելի դարձնելու գործում: Հայերը խորհրդային բանակին տվել են չորս մարշալ և Խորհրդային Միության մեկ ծովակալ, ինչպես նաև 60-ից ավել գեներալներ: 106 հայորդիներ դարձել են Խորհրդային Միության հերոսներ, 27 հայորդիներ՝ Փառքի շքանշանի լրիվ ասպետներ:

Ծովակալ Իսակովի կիսանդրին իր պատվավոր տեղը զբաղեցրեց Լենինգրադի բլոկադայի և պաշտպանության թանգարանում

Լենինգրադի բլոկադայի և պաշտպանության պետական թանգարանի հարուստ հավաքածուն համալրվեց ևս մեկով. սանկտպետերբուրգցի մեր հայրենակից, ճանաչված բարերար և հասարակական գործիչ Հրաչյա Պողոսյանի մտահղացմամբ, ջանքերով ու «Ժառանգություն և առաջընթաց» հումանիտար հիմնադրամի աջակցությամբ՝ թանգարանում իր մշտական ու պատվավոր տեղը զբաղեցրեց Խորհրդային Միության նավատորմի ականավոր ծովակալ, Խորհրդային Միության հերոս, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին պաշարված Լենինգրադի ազատագրման գործում մեծ ներդրում ունեցած հայորդու՝ Հովհաննես Իսակովի բրոնզե կիսանդրին:

Ֆաշիստական Գերմանիայի կողմից 872 օր շրջափակման ենթարկված Լենինգրադի ազատագրման գործում անգնահատելի մասնակցություն ցուցաբերած հայազգի ծովակալի կիսանդրու հանձնման հանդիսավոր արարողությանը ներկա էին նվիրատուները՝ համանուն բարեգործական հիմնադրամի նախագահ Հրաչյա Պողոսյանը և հումանիտար հիմնադրամի նախագահ, Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ուրոլոգիայի և անդրոլոգիայի ամբիոնի վարիչ, համալսարանական կլինիկայի տնօրեն, ուրոլոգ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր, մեր հայրենակից Արամայիս Քամալովը:

Հայտնի է, որ լենինգրադյան բլոկադայի ընթացքում Հովհաննես Իսակովի ղեկավարությամբ Լադոգա լճի սառույցների վրայով կյանքի կոչվեցին առաջին բեռնափոխադրումները, որոնք պատմության մեջ մտան «Կյանքի ճանապարհ» անվամբ: Երախտագետ լենինգրադցիները գիտեն նաև, որ 1913 թվականին բարձր ցուցանիշներով ավարտելով Թիֆլիսի ռեալական դպրոցը, Հովհաննես Իսակովը մեկնել է Պետերբուրգ և ընդունվել տեխնոլոգիական ինստիտուտ: Այստեղ ուսումնառության տարիներին մի քանի անգամ փորձել է ընդունվել ծովային կորպուս, բայց նրան մերժել են ազնվական ծագում չունենալու պատճառով: Հետագայում, 1928 թվականին, Իսակովն ավարտել է Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի բարձրաստիճան հրամանատարական կազմի կատարելագործման դասընթացները, 1932 թվականից դարձել Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի օպերատիվ արվեստի ամբիոնի պրոֆեսոր և դասավանդել այդ ուսումնական հաստատությունում՝ մինչև բալթյան նավատորմի հրամանատար նշանակվելը:

- Ինձ համար, որպես Սանկտ Պետերբուրգի բնակչի, անչափ կարևոր է և հաճելի, որ այսօր մենք պահպանում ենք անցյալի իրադարձությունների ու հերոսների հիշողությունը, և այն փոխանցում հաջորդ սերունդներին,- իր խոսքում ասաց Հրաչյա Պողոսյանը:

- Այսօր մենք ականատես ենք լինում եզակի իրադարձության, - ասաց Արամայիս Քամալովը: Սա կիսանդրու փոխանցում է ոչ միայն Խորհրդային Միության հերոսի և զորավարի, այլև մի անձնավորության, որը գիտեր ինչպես համատեղել զինվորական ծառայությունն ուսուցման և գիտության հետ: Որպես ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարի առաջին տեղակալ՝ Հովհաննես Իսակովը Ռազմածովային ակադեմիայի ղեկավարն էր, որտեղ և դասավանդում էր: Նրա գիտական աշխատությունների հսկայական մասը նվիրված էր աշխարհագրությանը, օվկիանոսների ուսումնասիրությանը և ռազմական պատմությանը:

Միջոցառմանը ներկա էր նաև կիսանդրու հեղինակը՝ քանդակագործ, Ռուսաստանի նկարիչների միության անդամ, Արվեստի և արդյունաբերության պետական ակադեմիայի պրոֆեսոր Լևոն Բեյբությանը, որ հանդիսությանը մասնակցելու էր եկել ակադեմիայի ռեկտոր Աննա Կիսլիցինայի հետ: Կիսանդրու հանձման արարողությանը ներկա էր նաև Սանկտ Պետերբուրգի և Հյուսիսարևմտյան շրջանի Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական տեղապահ Պողոս Վարդանյանը, Հայաստանում Ռուսաստանի բիզնես-դեսպան Արթուր Սողոմոնյանը, «Նոև Կովչեգ» թերթի գլխավոր խմբագիրը և շատ ուրիշներ:

Ընդհանուր առմամբ, Հրաչյա Պողոսյանի և նրա բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ ստեղծվել և վերականգնվել են ավելի քան 200 հոգևոր, մշակութային և պատմական նշանակություն ունեցող հուշարձաններ, իրականացվել և կյանքի են կոչվել Հայրենական մեծ պատերազմի հերոսներին և իրադարձություններին նվիրված 120-ից ավելի հուշարձաններ և նախագծեր, իսկ մի մասն էլ իրականացման փուլում են: Հրաչյա Պողոսյանի մտահղացմամբ ու աջակցությամբ հրապարակվել են տասնյակ գրքեր, նկարահանվել են մի շարք մեծարժեք և ուսուցողական վավերագրական ֆիլմեր:

զարգացումն է այն ամենի, ինչը ժառանգություն ենք ստացել անցյալից. նախ և առաջ որպես գիտության ամենահիմնական չլուծված պրոբլեմ՝ աշխարհի ծագումը: Այն աշխարհի, որն ըստ Էվկլիդեսի՝ Աստված կառուցել է մաթեմատիկական լեզվով և ոչ թե մեր սովորական մարդկանցով, և որը շատ քիչ, միայն աղքատիկ ու մոտավոր գիտելիքներ է պարունակում մեզանից դուրս գոյություն ունեցող իրերի մասին»: ՎՐԲԱՆ ՍՏԱՄԱՏՈՎ (բուլղար գրող և լրագրող)

***

«Ես չգիտեմ՝ որն է գիտության և առասպելի սահմանագիծը: Գուցե հենց դրանից էլ ոչ թանձրացական է թվում ինձ այդ առարկան՝ աստղագիտությունը, որը բոլոր գիտություններից ավելի մոտ է արվեստին, ոգուն, փիլիսոփայությանը, թեպետև խարսխված է ճշգրիտ հաշվարկների հիմքին...

Այնտեղ, Բյուրականի նշանավոր աստղադիտարանի պատերի մեջ ծնունդ են առել բազմաթիվ հզոր գաղափարներ:

***

«Բազում վտանգներ դիմագրավելիս, իրենց կրած տառապանքներով, իրենց ժողովրդին բնորոշ բնածին ազնվությամբ, իրենց աշխույժ հոգեկանով և բազմաթիվ գործնական ունակություններով հայերն ստեղծեցին մի գեղեցիկ քաղաքակրթություն, և այդ ամենով, իրենց զրկանքներով ու գործերով, պահպանեցին իրենց գույնը մյուս ժողովուրդների մեջ:

...Մեր ինքնաթիռը խորասուզվեց երկնքի մեջ (եթե երկինքը լիճ է): Նրա թևերի տակ փայլփլեց Սևանը՝ Հայաստանի ամենապայծառ աստղը:

«Լույսի միջաստղային կլանումը աստղերի լույսը այնքանով է թուլացնում, որքանով նրանք հեռու են մեզանից»,- ասում է դասագիրքը:

Գուցե, այնուամենայնիվ, ինչ-որ բան շփոթե՞լ է հեղինակը: Քանզի ես հեռանում եմ, ու ինձ հետ եմ տանում Հայաստանի չխամրող աստղերը՝ ինքնաթիռի թևերի վրա...Ուղիղ աչքերիս մեջ՝ կուրացուցիչ, պայծառ մի արև («Արևի կուլմինացիա»՝ կասեր դասագիրքը): Որտե՞ղ է Բյուրական-գիտությունը և որտեղ՝ առասպելը: (Իսկ որտե՞ղ է Բյուրական-առասպելը և որտեղ՝ պատմությունը)»: ՄԻՑՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼԻՍ (հույն գրող)

***

«Իմ հայ բարեկամը, աշխարհի մասին իր տիեզերաբանական հայացքների բավիղներով տարված, հանկարծ արտաբերեց. «Եվ հիշիր, Համբարձումյանի և Ալիխանովի նմանները երկնքից չեն ընկնում, ոչ էլ ծնվում են դատարկ դաշտում: Նրանց կաղապարը, ձուլվածքի հիմքը դեռևս դրված է մեծամորյան աստղադիտարաններում: Նրանք իրենց ոգով ուղղակի շառավիղներն են Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, հատկապես Շիրակացու, նրա, որ առաջինը, սրանից հազար երեք հարյուր տարի առաջ հերքեց Ծիր Կաթինի ծագման մասին միջնադարյան սխոլաստիկ պատկերացումը և առաջադրեց մի խումբ աստղաբույլերի մասին հ՛ր տեսությունը՝ մեզանից հսկայական հեռավորության վրա, որն ավելի ուշ ապացուցվեց Գալիլեյի կողմից»:

Այնպես, որ, ամեն մի երգ, ինչպես ասում են Հայաստանում, իր պատճառն ունի»: Վ. ՍՏԱՄԱՏՈՎ

***

«Բենիկ Մարգարյանը՝ աստղագետն
այդ հմուտ,
Բյուրականի այգում, ցողերի մեջ
գարնան,
Ծաղիկներ է քաղում սպիտակ ու
կապույտ
Եվ կնոջս մեկնում Դոն-Ժուանի նման:
Բայց երբ մութը նորից վարագույրը
կախի,
Այս ճերմկած մարդը՝ Շոպենի պես
արդար,
Պիտի իր մատները հուր աստղերին
բախի,
Պիտի աստեղնային նոտաները կարդա»:

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ
(լիտվացի բանաստեղծ)

***

«Այդ տիեզերականը հեռու չէ Գառնու հեթանոսական տաճարից: Մի քիչ տարօրինակ չէ՞ այդ հարևանությունը: Բայց նման մի տարօրինակություն էլ կայանի ղեկավար, ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանն է: Նա, ինչպես ինձ է թվում, դեպի տիեզերք մշտապես թռիչքի մեջ է, բայց միաժամանակ, իր մյուս պրոֆիլով, ուղղված է դեպի խորը անցյալը:

Իսկ կարելի՞ է այդպես միաժամանակ մտածել երկու չափումներում, որոնցից մեկը տիեզերքն է, իսկ մյուսը՝ հին քաղաքակրթությունները, արվեստը, փիլիսոփայությունն ու, իհարկե, Տիգրան Մեծի ժամանակների Հայաստանը:

Երբ ամեն մի բանի շուրջ ասելիք կա՝ դա իմաստությունն է: Իսկ երբ ամեն ինչի շուրջ հիշելու բան կա, դա իհարկե, ապրած կյանք է: Ակադեմիկոս Գուրզադյանը և՛ ասելու բան ունի, և՛ հիշելու...

Ի դեպ, երբ մի ուրիշ իմաստուն ծերուկ՝ ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանը հերթական անգամ իր նախնիների երկիրն է եկել, նա իշխանություններին ասել է, որ իրեն հյուրանոց պետք չէ՝ նա հյուրընկալվելու է Գրիգոր Գուրզադյանին...»: «ՆՈՎԱՅԱ ԳԱԶԵՏԱ» թերթի թղթակից

***

«Հերունու հայելային ռադիոդիտակը, որ գտնվում է Բյուրականից ոչ հեռու՝ Տեղեր և Օրգով գյուղերի միջև, տպավորիչ է իր չափերով ու ստեղծողի գիտական մտքի խիզախությամբ: Ի տարբերություն ամենատարածված պարաբոլային ալեհավաքների, սֆերիկ հայելիները ճառագայթներն հավաքում են ոչ թե մի կետում, այլ, այսպես կոչված, կաուստիկ մակերևույթին: Հերունու սկզբունքները նոր գաղափարով՝ գլխավոր գոգավոր հայելին անշարժ է, իսկ օբյեկտի վրա նշան բռնելը կատարվում է սֆերայի կենտրոնի շուրջը երկրորդային հայելու տեղաշարժմամբ, նրա իսկ կիզակետում, ու հավաքվում է աղբյուրից եկած՝ շատ բան ասող ճառագայթումը...

...Հերունու դիտակն ունիկալ է՝ կարող է Բյուրականի լեռներից երկնքի որոշակի կետին նայել միաժամանակ երկու դիապազոններում...

...Իսկ ինչ-որ ժամանակ Հայաստանի այդ գողտրիկ անկյունը՝ Բյուրականը, ԽՍՀՄ հիմնարար ու կիրառական գիտության իսկական կենտրոն էր»: gazeta.ru, ՊԱՎԵԼ ԿՈՏԼՅԱՐ (ռուս լրագրող)

***

«Ամեն ինչ կարող էր ավելի ավարտուն լինել: Կգնայի Բյուրական, կյանքումս առաջին անգամ կայցելեի աստղադիտարան ու... թռիչք դեպի տիեզերք: Եվ իմ պատմությունը կհաղթահարեր Երկրի ձգողականությունը, իսկ իմ ընթերցողի ականջներում դեռ երկար-երկար կհնչեր տիեզերական վերջին ակորդը: Եվ նա դեռ երկար կնայեր իմ հրթիռի ետևից...

Ինչո՞ւ, ինչո՞ւ ես փախա վերջին դասից ու աստղագիտությունը բաց թողեցի...»: ԱՆԴՐԵՅ ԲԻՏՈՎ (ռուս գրող)

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՀՆԱՄԵՆԻ, ՊԱՅԾԱՌ, ՀՍԿԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԵՐԿՆՔԻ ՄԵՋ...»

Անավարտ կոլաժ՝ օտարների՛ մտածածով ու զգացածով

«Վիկտոր Համբարձումյանը Հայաստանը տեղադրեց երկնային քարտեզի վրա»

The Independent

«Նա, ով գոնե մեկ անգամ իր կյանքում տեսել է Բյուրականի արծաթյա գմբեթները և ամբարտավան մռայլ լեռները, ով տեսել է այդ ամենից ավելի վեր կախված լուսնի փայլփլուն թվացույցը (Հավիտենական ոսկե ժամացույցը), ով գոնե մեկ անգամ սառել, քար է կտրել աստղային բուք ու բորանի տակ (քանի որ այստեղ շարունակ կապտասև երկինք է ու շռայլ աստղաթափ), նա լավ կհասկանա, թե որքան դժվար է մոտենալ աստղադիտակին...

Միայն այստեղ՝ աստղադիտարանում հանկարծ կհասկանաս քո տեղը տիեզերական մասշտաբներում, հանկարծ քո ներսում կլսես մոլեկուլի անօգնական ու անպաշտպան ծվծվոցը և միաժամանակ Գալակտիկայի՝ այսքան-այսքան դեցիբելի հասնող հզոր երգերը... Որովհետև միայն այստեղ՝ աստղադիտարանում դու ակամայից նայում ես ոչ թե երկնքին, այլ երկնքի մեջ...

Ինչևէ, գնանք Բյուրակա՛ն: Չէ որ, այնուամենայնիվ, պետք է գոնե մեկ անգամ նայե՞լ աստղադիտակից»: ՕԼԳԱ ՅՈՒՐԵՎԱ (ռուս լրագրող)

***

«Տուն-արվեստանոցը հասարակ էր ու հարմարավետ, լցված նրա տերերի տաղանդի ջերմությամբ: Կալենցի ընտանիքում նկարում էին բոլորը, բայց ամենաշատը ամենածեր նկարչի զարմանալի նկարներն են ամենալավը. բարեկամների հրաշալի դիմանկարներ, ծաղկեփնջեր, հին Երևանի փողոցները՝ ասես միաժամանակ տեսնված վերևից ու կողքից, կարծես թե դեպի երկինք թռչող վարդագույն ու մանուշակագույն ծառերը:

Բոլորը կամացուկ խոսում էին նկարների մասին: Ու հանկարծ՝ աշխույժ զրույց աստղագետների նոր հայտնագործությունների մասին: Հյուրերը մոռացան արվեստը: Այդտեղ էր Վ. Համբարձումյանը՝ աշխարհի խոշորագույն աստղագետներից մեկը»: ՄԱՐԿ ԿՈԼՏՈՒՆ (ռուս գրող)

***

«Հանճարի անունը Վիկտոր Համբարձումյան է, դարիս մեծագույն աստղաֆիզիկոսը: Այդ մարդու ուժը որևէ ab ovo հայտնագործության մեջ չէ: Նրա հուժկու, նորարարական տեսական միտքը անմիջական շարունակությունն ու հետագա



Ու այս ամենի մեջ է նաև հնամենի, պայծառ, հսկայական Հայաստանը...

Այդ ամենը չի խանգարում «փոխել ֆոկուսային տարածությունը», երբ պետք է տեսնել առաջին մեծության աստղերը (որոնց թվում քիչ չեն նաև Հայաստանի աստղերը...):

Եվ ահա `աչքերիս մեջ են հայտնվում սառը զրնգոց առաջացնող արծաթե գմբեթները...»: ՕԼԳԱ ՅՈՒՐԵՎԱ

***

«Համբարձումյանն առաջ քաշեց նախաաստղային նյութի գաղափարը: Նա գտնում է, որ աստղերը ծնունդ են առել ոչ թե տիեզերական փոշուց, այլ արդյունք են գալակտիկաների միջուկների մեջ եղած ակտիվության, որ գնալով նվազեցնում են իրենց խտությունը: Նա առաջինը լուծեց միգամածությունների միջոցով աստղերի ուլտրամանուշակագույն ճառագայթման պրոբլեմը և մշակեց միգամածությունների զանգվածի մասին էլեկտրոնային ջերմաստիճանի սահմանման մեթոդներ: Համբարձումյանն հայտնագործեց նոր տիպի աստղային համակարգեր՝ դինամիկորեն անկայուն ու քայքայվող, որոնց կոչեց աստղասփյուռներ: Համբարձումյանը ենթադրություն հայտնեց, որ գալակտիկաների միջուկները պարունակում են առայժմ մեզ անհայտ բնույթի գերխիտ նյութերի թանձրուկներ, օժտված էներգիայի ֆանտաստիկ, աներևակայելի պաշարներով: Համբարձումյանի գաղափարները ԱՄՆ-ի գիտությունների ակադեմիան դասեց մարդկության այն գաղափարների շարքում, որոնք մեր պատկերացումների մեջ հեղափոխություն են առաջացրել»: Վ. ՍՏԱՄԱՏՈՎ

ցուցիչ, պայծառ մի արև («Արևի կուլմինացիա»՝ կասեր դասագիրքը): Որտե՞ղ է Բյուրական-գիտությունը և որտեղ՝ առասպելը: (Իսկ որտե՞ղ է Բյուրական-առասպելը և որտեղ՝ պատմությունը)»: ՄԻՑՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼԻՍ (հույն գրող)

***

«Իմ հայ բարեկամը, աշխարհի մասին իր տիեզերաբանական հայացքների բավիղներով տարված, հանկարծ արտաբերեց. «Եվ հիշիր, Համբարձումյանի և Ալիխանովի նմանները երկնքից չեն ընկնում, ոչ էլ ծնվում են դատարկ դաշտում: Նրանց կաղապարը, ձուլվածքի հիմքը դեռևս դրված է մեծամորյան աստղադիտարաններում: Նրանք իրենց ոգով ուղղակի շառավիղներն են Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, հատկապես Շիրակացու, նրա, որ առաջինը, սրանից հազար երեք հարյուր տարի առաջ հերքեց Ծիր Կաթինի ծագման մասին միջնադարյան սխոլաստիկ պատկերացումը և առաջադրեց մի խումբ աստղաբույլերի մասին հ՛ր տեսությունը՝ մեզանից հսկայական հեռավորության վրա, որն ավելի ուշ ապացուցվեց Գալիլեյի կողմից»:

Այնպես, որ, ամեն մի երգ, ինչպես ասում են Հայաստանում, իր պատճառն ունի»: Վ. ՍՏԱՄԱՏՈՎ

***

«Բենիկ Մարգարյանը՝ աստղագետն
այդ հմուտ,
Բյուրականի այգում, ցողերի մեջ
գարնան,
Ծաղիկներ է քաղում սպիտակ ու
կապույտ
Եվ կնոջս մեկնում Դոն-Ժուանի նման:
Բայց երբ մութը նորից վարագույրը
կախի,
Այս ճերմկած մարդը՝ Շոպենի պես
արդար,
Պիտի իր մատները հուր աստղերին
բախի,
Պիտի աստեղնային նոտաները կարդա»:

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ
(լիտվացի բանաստեղծ)

***

«Այդ տիեզերականը հեռու չէ Գառնու հեթանոսական տաճարից: Մի քիչ տարօրինակ չէ՞ այդ հարևանությունը: Բայց նման մի տարօրինակություն էլ կայանի ղեկավար, ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանն է: Նա, ինչպես ինձ է թվում, դեպի տիեզերք մշտապես թռիչքի մեջ է, բայց միաժամանակ, իր մյուս պրոֆիլով, ուղղված է դեպի խորը անցյալը:

Իսկ կարելի՞ է այդպես միաժամանակ մտածել երկու չափումներում, որոնցից մեկը տիեզերքն է, իսկ մյուսը՝ հին քաղաքակրթությունները, արվեստը, փիլիսոփայությունն ու, իհարկե, Տիգրան Մեծի ժամանակների Հայաստանը:

Երբ ամեն մի բանի շուրջ ասելիք կա՝ դա իմաստությունն է: Իսկ երբ ամեն ինչի շուրջ հիշելու բան կա, դա իհարկե, ապրած կյանք է: Ակադեմիկոս Գուրզադյանը և՛ ասելու բան ունի, և՛ հիշելու...

Ի դեպ, երբ մի ուրիշ իմաստուն ծերուկ՝ ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանը հերթական անգամ իր նախնիների երկիրն է եկել, նա իշխանություններին ասել է, որ իրեն հյուրանոց պետք չէ՝ նա հյուրընկալվելու է Գրիգոր Գուրզադյանին...»: «ՆՈՎԱՅԱ ԳԱԶԵՏԱ» թերթի թղթակից

***

«Հերունու հայելային ռադիոդիտակը, որ գտնվում է Բյուրականից ոչ հեռու՝ Տեղեր և Օրգով գյուղերի միջև, տպավորիչ է իր չափերով ու ստեղծողի գիտական մտքի խիզախությամբ: Ի տարբերություն ամենատարածված պարաբոլային ալեհավաքների, սֆերիկ հայելիները ճառագայթներն հավաքում են ոչ թե մի կետում, այլ, այսպես կոչված, կաուստիկ մակերևույթին: Հերունու սկզբունքները նոր գաղափարով՝ գլխավոր գոգավոր հայելին անշարժ է, իսկ օբյեկտի վրա նշան բռնելը կատարվում է սֆերայի կենտրոնի շուրջը երկրորդային հայելու տեղաշարժմամբ, նրա իսկ կիզակետում, ու հավաքվում է աղբյուրից եկած՝ շատ բան ասող ճառագայթումը...

...Հերունու դիտակն ունիկալ է՝ կարող է Բյուրականի լեռներից երկնքի որոշակի կետին նայել միաժամանակ երկու դիապազոններում...

...Իսկ ինչ-որ ժամանակ Հայաստանի այդ գողտրիկ անկյունը՝ Բյուրականը, ԽՍՀՄ հիմնարար ու կիրառական գիտության իսկական կենտրոն էր»: gazeta.ru, ՊԱՎԵԼ ԿՈՏԼՅԱՐ (ռուս լրագրող)

***

«Ամեն ինչ կարող էր ավելի ավարտուն լինել: Կգնայի Բյուրական, կյանքումս առաջին անգամ կայցելեի աստղադիտարան ու... թռիչք դեպի տիեզերք: Եվ իմ պատմությունը կհաղթահարեր Երկրի ձգողականությունը, իսկ իմ ընթերցողի ականջներում դեռ երկար-երկար կհնչեր տիեզերական վերջին ակորդը: Եվ նա դեռ երկար կնայեր իմ հրթիռի ետևից...

Ինչո՞ւ, ինչո՞ւ ես փախա վերջին դասից ու աստղագիտությունը բաց թողեցի...»: ԱՆԴՐԵՅ ԲԻՏՈՎ (ռուս գրող)

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կրթությունը, գիտությունը և իշխանությունը

Վերջին տասնամյակներին պետությունը չի ունեցել հստակ և հավասարակշռված քաղաքականություն կրթության ու գիտության վերաբերյալ: Երևի թե դա է եղել պատճառը, որ տվյալ բնագավառի նորընծա իշխանավորը իր հայեցողությամբ ու պատկերացումներով ձգտել է նորամուծություններով «բարելավել» այդ ոլորտը, բայց ստացվել է այն, ինչ այսօր ունենք: Ինչպես ասել է հնդիկ ականավոր պետական գործիչ Ջավահառլալ Ներուն. «Մեր գլխավոր թերությունն այն է, որ մենք հակված ենք քննության առնել գործերը, քան դրանք կատարել»: Մարդու ամենակործանարար սխալներից մեկն էլ այն է, որ նա փչացնում է լավ գործը, այն վատ կատարելով: Այսինքն, ամեն գործ լիարժեք կատարելու համար պահանջվում է, առաջին հերթին մասնագիտական ու անկողմնակալ, ազնիվ և պարկեշտ մոտեցում: Քաղաքակրթության մեջ, և ընդհանրապես հասարակության մեջ, ամենամեծ աղետներից մեկը «կրթված» հիմարն է, որից խուսափելը միշտ չէ, որ հաջողվում է: Անհագուրդ փառասիրությունը միշտ մթագնում է այդպիսի մարդկանց ուղեղը տվյալ գործը կատարելիս.

նա չի նկատում իրեն և ուրիշներին սպառնացող վտանգը: Սխալ գործունեությունից ոչ միայն տուժում է մարդ անհատը, այլ ամբողջ ժողովուրդը, քանի որ այն տարվում է վատ քաղաքականությամբ: 1860-ական թվականներին միասնական Գերմանիա ստեղծող Օտտո Բիսմարկը ասել է. «Քաղաքականությունը ստեղծում է հանճարը, նրան ծառայում են նվիրյալները, բայց դրանից օգտվում են սրիկաները»: Նրա մյուս միտքը հեղափոխության մասին նույնպես հետաքրքիր է. «Հեղափոխությունը հորինում են հանճարները, այն իրականացնում են տաղանդները, դրանից օգտվում են տականքները և անպիտանները»: Այդ տեսակետից Ֆրիդրիխ Էնգելսը՝ կոմունիզմի մեծ գաղափարախոսը, նշել է. «Ամեն մի շարժման մեջ, ամեն մի գաղափարական պայքարում կան մի հատուկ տեսակի խառնաշփոթ գլուխներ, որոնք իրենց շատ լավ են զգում միայն պղտոր ջրում»: Իհարկե, դժվար է ընդունել այդ հայտնի մարդկանց ասածները մեր ժամանակների համար կամ չընդունել, նկատի ունենալով այն ժամանակների երկրների հասարակական կացութաձևերը, որոնք մեր ժամանակներում ավելի բազմատեսակ են: Հիմա աշխարհի երկրներում մեծամասամբ թևածում է հանրապետական կարգը (բայց ոչ աշխարհի ամենաբազմամարդ երկրում՝ Չինաստանում, որը սոցիալիստական կացութաձևով շատ զարգացած պետություն է): Քանի որ հանրապետական կարգը երկրների (այդ թվում նաև մեր Հայաստանի) կառավարման բարձրագույն ձևն է, ապա դա պահանջում է մարդկային բնավորության նույնպես բարձրագույն, ամենակատարյալ տեսակ, թե չէ տեղի կունենա կամայականություն անհասկանալի իրավիճակի պատճառով ու կբերի խառնաշփոթ, նույնիսկ երկրի կործանում: Ուստի, ինչպես ասել է հին հույն փիլիսոփա Դեմոկրիտը (մ.թ.ա. 5-րդ դար). «Կամայականությունը պետք է մարել ավելի շուտ, քան հրդեհը»:

Հասարակության մեջ կատարվող բոլոր տեսակի բացասական երևույթները պետք է բացառվեն, իսկ դրական երևույթները՝ խրախուսվեն երկրի բարձրագույն իշխանությունների կողմից: Սակայն հաճախ կառավարողները տալիս են խոստումներ ու դրանք արագ մոռանում, միչդեռ ժողովուրդը չի մոռանում ոչ միայն նրանց խոստումները, այլ նաև խոստացողներին ու չկատարողներին: Ինչպես ասել է չինացի մեծ մտածող Կոնֆուցիոսը (551-479 մ. թ. ա.)՝ «Եթե ժողովուրդը չհավատա իր կառավարությանը, այն ժամանակ կմեռնի պետությունը»: Վերջապես, որևէ պետության արժանապատվությունը կախված է այն կազմակերպող անհատների արժանապատվությունից, որը մեծ պատասխանատվություն է դնում այդ անհատների վրա: Նրանք սխալվելու, սխալն իբրև ուղղելու, հապճեպ և ոչ հիմնավոր որոշումներ ընդունելու (որոնք հեղինակազրկող են) իրավունք չունեն և, ինչպես ժողովուրդն է ասում՝ «պետք է յոթ չափել, մեկ կտրել»: Իշխանավորները չպետք է հատուկ արտոնություններ ստեղծեն իրենց համար, որովհետև դա ղեկավարությանը և նրա անդամներին միանգամից արժեզրկում է մարդկանց աչքում, ովքեր առաջինը անմիջապես այդ են տեսնում և երևույթի խորքերը չեն մտնում: Իսկ ընդհանրապես ամեն տեսակի արտոնությունները գերեզման են ազատության և արդարության համար, եթե դրանցից օգտվում են իշխանավորները, ղեկավարները և ունևորները: Այդ երևույթը նման է՝ «թքել դեպի քեզ փչող քամու վրա» (ժողովրդական խոսք է): Այսինքն, մարդու իրավունքի ամենաերդվյալ թշնամիներից մեկն էլ անհատի անհարկի և ապօրինի արտոնություններն են: Երբեք պետք չէ չեզոք ու անտարբեր լինել ժողովրդի ձայնին՝ անկախ որտեղից է այն հնչում (ասողը հարուստ է, թե աղքատ, կուսակցական է, թե ոչ, իշխանավոր է, թե չնչին անձնավորություն), միևնույն է պետք է լսել և արագ արձագանքել: Ահա թե ժամանակին ինչ է գրել մեծ Դանթե Ալեգրիեն. «Դժոխքում ամենաշիկացած տեղերը նախատեսված են նրանց համար, ովքեր բարոյական մեծ փորձությունների ժամանակներում չեզոքություն են պահպանել»: Իսկ հույն խոշոր իրավապաշտպան Ցիցերոնը ասել է. «Գոյություն ունի արդարության երկու հիմունք՝ ոչ ոքի չվնասել և օգուտ բերել հասարակությանը»: Հելվեցիուսը նմանապես ասել է. «Եթե ցանկանում ես ազնիվ վարվել, նկատի ունեցիր և հավատա հասարակության շահին, որովհետև անձնական շահը մարդուն հաճախ գցում է մոլորության մեջ»:

Կառավարությունը պետք է ունենա հստակ պատկերացում պետության գործունեության բնագավառների գերակայության վերաբերյալ: Իսկ որոնք են երկրի համար ամենակարևորագույն բնագավառները, որոնք ցանկացած իշխանության դեպքում, ցանկացած ժամանակաշրջանում, ցանկացած հանգամանքներում պետք է միշտ առաջին հերթին պետության կողմից ֆինանսավորվեն ու զարգացվեն: Մեր կարծիքով մեր երկրի համար առաջնային կարևորագույն բնագավառներն են՝ պետահիրավական, սոցիալ-տնտեսական, ռազմապաշտպանական, ուսումնագիտական և առողջապահական: Մնացած բնագավառները հաջորդ կարևորություն ունեն երկրի համար, իսկ որոշներն էլ ածանցվում են նշված կարևորագույն բնագավառներից: Հետաքրքիր է նշել, որ դեռևս չինացի մեծ մտածող և մանկավարժ Կոնֆիցիուսը երկրի և ժողովրդի համար հերթականորեն ամենակարևորն էր համարում՝ սնունդը, ռազմապաշտպանությունը և կրթությունը:

Ինչպես նշեցինք վերը, միանշանակ է, որ ուսումն ու գիտությունը ամենահիմնարար (ֆունդամենտալ) և կարևորագույն ռազմավարական բնագավառներից է և առանց դրա չի կարող լինել զարգացած ու հզոր պետություն: Ուսումն ու գիտությունը փոխկապակցված են ու լրացնում են մեկը մյուսին, որովհետև ուսումնասիրությամբ են դառնում գիտնական, իսկ գիտությամբ կառուցվում է ուսումը, հետևաբար դրանք իրարից չի կարելի բաժանել, քանզի դա մեկ միասնություն է: Կարելի է եզրահանգել, որ մեր կառավարությունը դրանց գործունեությունը «մեկ արշինով պետք է չափի», քանի որ իրարից բաժանելիս երկուսի զարգացումը խաթարվում է և դառնում երկրի համար անօգուտ և անիմաստ: Ուսումն ու գիտությունը որպես մեկ միասնական բնագավառ գործել է նախկինում՝ Խորհրդային ժամանակներում, երբ ֆինանսավորումը կատարվում էր կրթության և գիտության նախարարության ղեկավարությամբ: Այդ տեսակետից անհասկանալի էր հետագայում գիտության կոմիտեի ստեղծումը, քանի որ գիտությունների ակադեմիան և կրթության ու գիտության նախարարությունը թե՛ գիտական, թե՛ ուսումնակրթական հարցերը միասին լուծում էին շատ լավ: Չնայած գիտական աշխատանքների կատարման համար տրամադրվում էր ոչ բարձր, մոտ 3% ՀՀ բյուջեից, այնուամենայնիվ գիտության համար դա վատ չի եղել: ՀՀ-ում հասարակական և քաղաքական կացութաձևը փոխվելուց հետո գիտության ֆինանսավորումը բյուջեից դարձավ մոտ 0.3%, որը իհարկե շատ քիչ է:

Իսկապես, ներկայումս անհրաժեշտություն կա գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման հարցը քննարկել և որոշել՝ բաց, օբյեկտիվ և անկողմնակալ ձևով, ելնելով պետության և գիտության շահերից: Գտնում ենք, որ, այսպես կոչված, ռեյտինգային ձևը չպետք է գերակայի ՀՀ-ում. գիտնականները պետք է աշխատեն և գիտական աշխատանքները հրատարակեն առաջին հերթին մեր երկրում, ոչ թե արտերկրներում, իսկ արտասահմանյան և սորոսյան օգնության ձևերից պետք է հնարավորինս զերծ մնալ: Ասվածից բխում է, որ գիտելիքների համար ավելի շատ պետք է հոգ տանել, քան ունեցվածքի, որովհետև ոչ թե ունեցվածքով գիտելիք, այլ գիտելիքով են ունեցվածք ձեռք բերում: Մեծն Գյոթեն ասել է. «Մարտնչող տգիտությունից ավելի սարսափելի բան չկա: Վայ այն երկրին, որտեղ քաղաքացիներին և գործերը կառավարում են ոչ թե օրենքները, այլ ենթականները, պետերը և դատարանները: Նրանցից յուրաքանչյուրն իրեն համարում է բարձրագույն աստիճանի իմաստուն և դրանից էլ «յոթ դայակների պահած մանուկը» մնում է առանց աչքի»: Անարդարությունը չարիք է ծնում, իսկ «Արդարությունը առանց ուժի անօգնական է, ուժն էլ առանց արդարության դառնում է բռնակալ» (Պասկալ): Հարցերը լուծելիս պետք է հույսը դնել միմիայն սեփական ուժի և կարողության վրա: Ճիշտ է ավանդել Գրիգոր Արծրունին. «Մեզ վրա պետք է հույս դնենք, և այն ազգը, որ ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»: Այդ տեսակետից ելնելով հաճարեղ Ռաֆֆին գրել է. «Օտարի օգնությունից մեզ շահ չկա: Դժբախտ է այն ազգը և դժբախտ կմնա, որ օտարի օգնության կարոտ կլինի: Ոչ ոք իր հոգու համար մեզ չի օգնի, նա պետք է տասը բան առնե մեզանից, որ մի բան տա»: Այս ճշմարտության դառը պտուղները մենք քաղել ենք և իսկապես, երկրի բոլոր կարևոր գործերի հետ միասին մեր գիտությունը մենք պետք է զարգացնենք մեր երկրի սեփական միջոցներով ու մարդկանցով, ազնիվ և շիտակ, առանց ժողովրդի միջոցները ինչ-ինչ ձևերով կլանելու: Մեր կարծիքը հանկարծ սխալ չհասկացվի: Մենք գտնում ենք, որ արտերկրների գիտական կենտրոնների հետ համագործակցելը պետք է ավելի ակտիվացնել և ընդլայնել: Անշուշտ այն կարող է նպաստել գիտության զարգացմանը մեր երկրում:

Շարունակելի

Սերգեյ Կոստանդի ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քիմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռոմիկ Սուրենի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԲԺԻՇԿԸ՝ ԱՐՑԱԽԸ ՍՐՏՈՒՄ

Միշտ էլ այն կարծիքին եմ եղել, որ իսկական բժիշկը ոչ միայն ու ոչ այնքան այդ մասնագիտությունը ժամանակին ընտրած եւ առողջապահության ոլորտում լոկ երկար տարիներ աշխատած անձն է, այլ նա, ում փոքրուց խորթ չի եղել մարդկային պարզ կարեկցանքը, իսկ հետագայում էլ երբեք չի լքել ուրիշին օգնելու անհատնում ցանկությունը:

Այդ և ուրիշ շատ արժանիքներով էր օժտված ամերիկահայ բժիշկ ու հասարակական գործիչ **Ռաֆֆի Հովհաննիսյանը** , ով վերջերս Նյու Ջերսիում կնքեց մահկանացուն՝ իր ետևից թողնելով մնայուն ու հիշատակելի գործերի լուսավոր մի հետագիծ:

Ծնվել էր 1938-ի օգոստոսի 16-ին Երուսաղեմում և առաջնեկն էր Մեծ եղեռնից մազապուրծ ու վերապրած ծնողների: Ապագա բժշկի ստացած հայեցի դաստիարակության անկյունաքարերը եղան Ընտանիքը, Եկեղեցին և Հայրենիքը:

Ընտանիքը

Ողջ կյանքում նրան ուղեկցեց հոր՝ Առաքելի առասպելական կերպարը: Երախտապարտ որդին իր խոսքում միշտ էր շեշտում, թե ինչպես, լինելով «պարզ կոշկակար»՝ հայրն անպայման ուզեցել է 6 զավակ ունենալ: Ականջներում մշտապես հոր հետևյալ խոսքն է հնչել. «Տղա՛ս, այնքա՞ն ենք կորցրել, որ պիտի նաև այսպես՝ շատ զավակներ ունենալով ծառայենք մեր ազգին»: Մայրը՝ Տիրուհին, բուժքույր էր և հավանաբար հենց նրա ուղղորդմամբ պատանի Ռաֆֆին որոշեց ընտրել բժշկի մասնագիտությունը:

Նախնական կրթությունը Հալեպում ստանալուց հետո ուսումնատենչ հայորդին դիմում է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական բաժին: Այդ քաղաքում էլ նա ծանոթանում է իր կյանքի ուղեկցի՝ գեղատես հայուհի Շողակ Վարժապետյանի հետ: Այս զույգի մասին Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Խաժակ արք. Պարսամյանը գրում է. «Անոնք երկուքը, իբրև օրինակելի զույգ, զիրար ամբողջացուցին՝ իրականացնելով բազմաթիվ ծրագիրներ»:

Եկեղեցին

Հասակ առած լինելով վանական ավանդական մթնոլորտում՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը ողջ կյանքում փարված մնաց հայ եկեղեցուն ու նրա սրբություններին: Դեռ փոքրուց, երբ հաճախում էր Հալեպի «Էմմանուէլ» վարժարան, նվիրվեց սուրբգրային ընթերցանության, որի շատ դրույթներ

հետագայում նա հասցրեց իրագործել երկրային կյանքում:

Պատահական չէր, որ դոկտոր Հովհաննիսյանը երկար տարիներ անդամակցեր Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Թեմական խորհրդին՝ լինելով նաև դրա փոխատենապետը, իսկ երկու անգամ որպես ընտրված պատգամավոր մասնակիցը դառնար Մայր աթոռում 1995 և 1999 թվականներին գումարված Ազգային գերագույն ժողովների: 2014-ին ԱՄՆ-ի Արևելյան թեմի կողմից Ռաֆֆի Հովհաննիսյանը հռչակվեց «Եկեղեցվո Պատվո մարդ»:

Հանուն Արցախ աշխարհի

Երկար տարիների արդյունավետ աշխատանքով առանձնացնելի է նրա համագործակցությունը հատկապես Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հետ, որի բժշկական շատ ծրագրերի նախաձեռնողներից ու քաջալերողներից մեկը դարձավ:

Մտապահել եմ ՀՕՖ-ի երևանյան գրասենյակում 2011 թ. փետրվարի 10-ին կազմակերպված մամլո ասուլիսը, որին պիտի ազդարարվեր նշյալ ծրագրի մեկնարկը: Դրան, ի շարս ՀՀ և ԱՀ առողջապահության նախարարությունների բարձրաստիճան այրերի, Հայաստանի պետական բժշկական համալսարանի և ՀՕՖ-ի ներկայացուցիչների մասնակցում էր նաև ԱՄՆ-ից ժամանած Ռաֆֆի Հովհաննիսյանը: Իհարկե, բոլորն էին ուրախ, սակայն ամենից շատ ճառագում էր մեր հայրենակցի դեմքը. չէ՞ որ նա սովորական մասնակից չէր, այլ մեկն այդ ծրագրի հեղինակներից:

Բանն այն է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային հանրապետություններում և առավել ևս Ադրբեջանից ինքնորոշված Լեռնային Ղարաբաղում փլուզվել էր առողջապահության ողջ համակարգը՝ ներառյալ բուժկատարելագործման գործընթացը:

Այս համապատկերում իսկական փրկություն էր Ամերիկահայ առողջապահական մասնագետների կազմակերպության (AAHPO) կողմից ֆինանսավորվող վերոհիշյալ ծրագիրը, որի շրջանակներում տարեկան 35-40 բժիշկ մեկամսյա անվճար վերապատրաստում է անցնում Երևանի առաջատար բուժհաստատություններում ամենատարբեր մասնագիտացումների գծով:

Դոկտոր Ռաֆֆին, որպես իր գործի գիտակ ու սրտացավ մասնագետ, խորապես գիտակցում էր նաև Արցախի գյուղական համայնքների բուժքույրերի վերապատրաստման անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով, որ հայկական երկրորդ հանրապետությունը դեռևս պատերազմի մեջ է ազերիների հետ, և ամեն վայրկյան կա կռիվների վերսկսման վտանգ: Բուժքույրերի մեծ մասը, սակայն, տարիներ շարունակ չէր անցել մասնագիտական վերապատրաստում: Հարկ էր ուրեմն մշակել առաջնային բուժօգնության օղակի վերապատրաստման գործնական մոդել ու գտնել ծրագրի հովանավոր: Դարձյալ հեղինակավոր բժշկի հորդորով էր, որ ամերիկահայ Նազարյան ընտանիքը ստանձնեց այդ պատասխանատվությունը: Արդյունքում 2018-ին տրվեց մեկնարկը: Ահա թե ինչ է պատմում ՀՕՖ-ի փոխտնօրեն և բժշկական ծրագրերի համակարգող **Համբարձում Սիմոնյանը**. «Ճիշտն ասած, շատ մարդիկ են հետաքրքրվել այս խիստ հրատապ խնդրով, սակայն խոսել են, խոսել ու... մոռացել: Մինչդեռ դոկտոր Ռաֆֆին, զգալով հարցի կարևորությունը, անմիջապես անցավ գործի ու գլուխ բերեց այն»:

Արդեն երրորդ տարին է, ինչ հաջողությամբ ընթանում է Արցախի բուժքույրերի վերապատրաստման գործընթացը, որը բացի մայրաքաղաք Ստեփանակերտից և 7 շրջկենտրոններից ներառում է նաև 301 գյուղական համայնք, որոնք սպասարկում են 600-ից ավելի բուժքույրեր:

Ավելացնենք, որ Ռաֆֆի Հովհաննիսյանը երկար տարիներ իր խորհրդատվությամբ նպաստել է նաև Երևանի պետական բժշկական համալսարանի առաջընթացին: Այդ բուհի նախկին պրոռեկտոր և ՀՕՖ-ի բժշկական շրջանավարտների միության խորհրդի անդամ **Գևորգ Յաղջյանը** նշանավոր բժշկին դիպուկ կերպով բնորոշում է որպես նշյալ հաստատության «ոչ պաշտոնական արտակարգ ու լիազոր դեսպանն Ամերիկայում»:

...Իր կյանքի վերջին 7 տարիներին Ռաֆֆի Հովհաննիսյանն անհավասար կռիվ էր տալիս ու պայքարում դաժան հիվանդության դեմ՝ չընկրկելով ոչ մի պահ և դույզն-ինչ չկորցնելով լավատեսությունը: Նրա մահից անմիջապես հետո ստեղծվեց ՀՕՖ-ի «Ռաֆֆի Հովհաննիսյան կրթական հիմնադրամը», որի թիրախը դարձյալ Արցախ աշխարհն է ու նրա առողջապահական համակարգի զարգացումը: Այն ամենը, ինչ արեց նվիրյալ հայորդին, ամենևին էլ փառքի համար չէր: Ընդհակառակը, վերջինս էր անվերջ հետապնդում նրան: Անվանի բժիշկը կենդանության օրոք պարգևատրվեց ամերիկյան ու հայրենի մի շարք մեդալներով ու շքանշաններով: Հիշատակենք միայն մեկը՝ ԱՄՆ-ի պատվավոր «Էլիս Այլենդ» շքանշանը, որին արժանացան թե՛ ինքը, թե՛ Շողակ Հովհաննիսյանը:

Բժշկի պատգամը

Հավարտ հայրենասեր հայորդու մասին պատմող այս ակնարկի՝ մի փոքրիկ հատված մեջբերեմ նրա հարցազրույցներից մեկից. «Չմոռնանք, որ մենք հայ ենք, և մեր հիմնական կապը մեկմեկու հետ նույն ազգին պատկանելն է: Մեր երակներում հոսող արյունն այնքան մաքուր է, որ պիտի ջանանք չպղծել այն սխալ գաղափարներով, նախանձությամբ, թշնամությամբ և հակառակություններով»: Դժվար է գերագնահատել այս խոսքերի արդիականությունն ու նշանակությունը մեր օրերում...

Լևոն ԼԱԶԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ժերար Տետեյանն ընտրվել է Ֆրանսիայի Անդրծովյա գիտությունների ակադեմիայի անդամ

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժերար Տետեյանն ընտրվել է Ֆրանսիայի Անդրծովյա գիտությունների ակադեմիայի անդամ: Այս կապակցությամբ Ժերար Տետեյանին շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Պատասխան նամակով պրոֆեսոր Տետեյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ ԳԱԱ նախագահին և նշել, որ իր ընտրության հարցում մեծ դեր են խաղացել հայ ժողովրդի պատմության վերաբերյալ իր հետազոտությունները, Երևանի պետական համալսարանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության, ակադեմիկոսների և ԳԱԱ ինստիտուտների տնօրենների ու անդամների հետ համագործակցությունը:

Ժերար Շառլի Տետեյանը ծնվել է 1942 թ. փետրվարի 4-ին Ֆրանսիայի Նանտ քաղաքում: 1984 թ.-ից ԵՊՀ պատվավոր դոկտոր է, 1966 թ.-ից՝ Մոնպելիեի գիտության և գրականության ակադեմիայի անդամ: 1990 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի կոչում, 1991 թ.՝ պրոֆեսորի: 2004 թ. ընտրվել ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ: 1969 թ.-ից Ժերար Տետեյանը Մոնպելիեի Պոլ Վալերի համալսարանում դասավանդում է ընդհանուր պատմություն:

Ժերար Տետեյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են միջնադարյան Հայաստանի, մասնավորապես, հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանը: Ֆրանսերեն է թարգմանել և ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակել Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» (1980 թ.): «Հայոց պատմություն» գրքի (1982 թ., ֆրանսերեն) համահեղինակն է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեց ՀՀ-ում պղնձի արտադրության և ծծմբային միացությունների վերամշակմանն ուղղված ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից առաջարկվող համալիր մոտեցումը

ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Կարեն Գրիգորյանը ներկայացրեց «ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից ՀՀ-ում պղնձի արտադրության և ծծմբային միացությունների վերամշակմանն ուղղված առաջարկվող համալիր մոտեցումը» թեմայով գիտական հաղորդումը հունիսի 15-ին կայացած գիտական քննարկման ժամանակ:

Քննարկմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը, ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լևոն Թավադյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի հասարակական հիմունքներով խորհրդական Ռաֆայել Գևորգյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ Կարեն Գասպարյանը, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Աղբալյանը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրեններ, գիտաշխատողներ, ԵՊՀ-ի, ՀԱՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀԱԱՀ-ի և այլ ԲՈՒՀ-երի գիտնականներ:

Քննարկվեցին պղնձի արտադրության կարևորության, ծծմբական թթվի, մաքուր պղնձի արտադրության շահավետության հարցերը ՀՀ-ում, ինչպես նաև՝ ծծմբական թթվից ՀՀ-ում սպառվող նյութերի արտադրության հնարավորությունը: Մասնակիցներն անդրադարձան նոր տեխնոլոգիաների և տեխնիկայի ներդրման զարգացման հեռանկարներին: Հատուկ ընդգծվեց ճարտարագետ-տեխնոլոգների պատրաստման անհրաժեշտությունը քիմիայի և մետալուրգիայի բնագավառներում:

Քննարկումը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԳԵՆԵՐԱԼ-ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՒԼԵԲՅԱԿԻՆ

(Ծննդյան150-ամյակի առթիվ)



Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում՝ Արևմտյան Հայաստանում, ռուսական բանակի ծավալած ռազմական գործողություններին առաջին իսկ օրից ակտիվորեն մասնակցել է նաև զորավար Ալեքսանդր Պարֆենովիչ Կուլեբյակինը (1871 – ?): Նա Թերեքի կազակ էր, գնդապետ, ապա գեներալ-մայոր, Վանի ջոկատի, այնուհետև Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար: Նրա հրամանատարության տակ ոխերիմ թշնամու՝ թուրքերի դեմ ուս ուսի կռվել են ռուս զինվորներն ու հայ կամավորականները:

Ա. Կուլեբյակինն ականատես է եղել Արևմտյան Հայաստանի ավերածությանը, հիացել է հայերի քաջությամբ, պայքարի նրանց անկոտրում կամքով: Ռազմական մի շարք գործողություններ է իրականացրել զորավարներ Անդրանիկի, Համազասպի և այլոց հետ: Նրան գերել է Հայաստանի պատմությունը, մշակույթը, բնությունը: Իր ամենօրյա տեսածի ու ապրածի անմիջական տպավորություններով հյուսել է բանաստեղծություններ, մշակել հայ ժողովրդական էպոսը, անդրադարձել լեգենդներին, կատարել թարգմանություններ Հովհ. Թումանյանի ստեղծագործություններից: 1917 թ. Թիֆլիսում լույս է տեսել նրա «Միերի դուռը: Վանի արձագանքները» գիրքը:

Կովկասից ռուսական բանակի հեռանալուց հետո մնալով Անդրկովկասում, ապրելով Թիֆլիսում՝ Ա. Կուլեբյակինն ակտիվորեն մասնակցել է հասարակական-քաղաքական, գրական կյանքին, մասնավորապես՝ հայ հասարակայնությանը հուզող կարևոր հարցերի ու խնդիրների լուծմանը: Նա բարեկամական, ընկերական հարաբերություններ է ունեցել, աշխատել է հայ մշակույթի, գրականության, հասարակական-քաղաքական, զինվորական բազում նշանավոր գործիչների հետ: Առանձնապես մտերիմ է եղել հայ բանաստեղծության նահապետ Հովհ. Թումանյանի հետ (տե՛ս «Գիտություն», ապրիլ, - 4, 2019 թ.): Անգնահատելի է հատկապես նրա կատարած աշխատանքը «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովում» որպես ռազմապատմական բաժնի վարիչ և «Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբում»:

Ստորև ներկայացնում ենք ընթերցող լայն հանրությանն անծանոթ քննիչ հանձնաժողովի ռազմապատմական բաժնի տեղակալ-քարտուղար Լևոն Լիսիցյանի՝ բաժնի կատարած աշխատանքների նկարագրությունը, որում, ըստ ամենայնի, տրված է գեներալ Ա. Կուլեբյակինի կատարած աշխատանքի գնահատականը:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1914-1918 ԹՎԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՌԱԶՄԱՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՃԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1918 թվի աշնանը ընդհանուր զինադադարը կնքելուց հետո և Փարիզի կոնֆերանսի նախօրյակին հայկական զանազան շրջանակներում այն միտքը սկսեց արծարծվել, որ անհրաժեշտ է խնամքով ժողովել հայոց ռազմական գործողությանը վերաբերող բոլոր նյութերը և պատրաստել համաշխարհային պատերազմին նրանց ցույց տված մասնակցության ընդհանուր պատմական նկարագրությունը: Այդ, ինքնըստինքյան արդեն հետաքրքրական ու արժեքավոր աշխատանքը ավելի ևս կարևոր էր դառնում այն պատճառով, որ հայ ժողովուրդը կանգնած էր իր ուրույն պետական կյանքի շեմին և մեծ կարիք էր զգում իր բոլոր ուժերի և ազգային կարողության կշռադատության ու գիտակցության:

Բացի այդ, հայոց զորականության և դաշնակիցների «1 անընթեռնելի» հանդեպ նրա մատուցած խոշոր ծառայությունների պատմական այդպիսի մի տեսությունը կարևոր փաստաթուղթ պետք է դառնար դաշնակիցների սեղանի վրա հայ ժողովրդի պահանջները դնելու և նրա իրավունքները պաշտպանելու համար:

Երիտասարդ հայ զորականության պատմությունը լավագույն ապացույցը պետք է լիներ հայ ժողովրդի իրական ուժերի, իսկ նրա անսահման զոհաբերություններն ու կորովի պայքարը՝ անժխտելի առհավատչյան նրա իրավունքների ու արդար պահանջների իրագործման համար:

Թիֆլիսում այդ միջոցին կազմվում էր «Քննիչ հանձնաժողով» արձանագրելու ու վիճակագրելու համար հայ ժողովրդի պատերազմից կրած կորուստները՝ խաղաղություն կնքելու միջոցին հատուցումն պահանջելու նպատակով Տաճկաստանից և նրա դաշնակիցներից:

Ահա այդ «Քննիչ հանձնաժողովին» կից, նրա նախագահի ու անդամների - Հովհաննես Թումանյանի, Տիգրան Բեգզադյանի, Խրիստ. Վերմիշյանի, Տ. Հովհաննիսյանի և պ. Լեոյի նախաձեռնությամբ որոշված էր՝ վիճակագրական, քրեական և պատմական բաժիններին կից հիմնել նաև հատուկ ռազմապատմական մի հանձնախումբ:

Իբրև նախագահ և գլխավոր խմբագիր ռազմապատմական այդ հանձնախմբի հրավիրված էր զորավար Ալեքսանդր Կուլեբյակինը, հայտնի իբրև բանաստեղծ ու վիպական գրող, որը հրատարակված ուներ արդեն մի քանի բանաստեղծական գրվածքներ Հայաստանի մասին: Զորավար Կուլեբյակինը ինքը Թերեքի կոզակ լինելով հանդերձ, մեծ համակրանք ու հետաքրքրություն էր տածում միշտ դեպի հայ ժողովուրդը, զգում էր ու հարգում նրա ձգտումներն ու ցավերը և հայտնի էր իբրև անաչառ մտքի ու պայծառ հոգու տեր մարդ: Այն ժամանակ նա անմիջական մասնակից է եղել ամբողջ պատերազմին ռուս-տաճկական ճակատում սկզբից մինչև վերջին շրջանը, և, ունենալով արտակարգ հիշողություն ու մեծ գրողի մեծ շնորհք, իրոք որ պետք է հարմարագույնը համարվեր հիշյալ ռազմական պատմությունը կազմելու համար:

Նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ զորավար Կուլեբյակինի նման չեզոք մի մարդու և հեղինակավոր զորականի տված պատմական նկարագրությունն ու գնահատությունը առանձնապես հեղինակավոր ու վստահելի պետք է լիներ ամենքի համար:

Հանձնախմբի կազմի մեջ հրավիրված էին բացի զորավար Կուլեբյակինից հիշյալ անձինք. փ. գնդապետ ընդհանուր շտաբի - Ս. Սերգեև, գլխապետ Ն. Աբազյան, պ. Մ. Վալադյան իբրև ավագ աշխատակիցներ, Ս. Փիրումյան, տեղակալ Ա. Տեր-Մկրտչյան, փ. տեղակալներ Թ. Պետրոսյան և Յ. Տեր-Գրիգորյան — իբրև կրտսեր աշխատակիցներ: Քարտուղարի պաշտոնով հրավիրված էր փ.-տեղակալ Լ. Լիսիցյանը:

Ամբողջ աշխատանքը բաժանված էր երեք գլխավոր մասերի.

Ա. Կամավորական շրջան՝ 1914-1916 թվեր, Բ. Հրաձիգ գումարտակների շրջան՝ 1916–1917 թվեր, Գ. Առանձին հայկական զորամասերի շրջան՝ 1917–1918 թվերը: Շրջաններից ամեն մեկը հանձնված էր մի ավագ աշխատակցին իր օգնականներով և թվում էր, որ ամբողջ աշխատանքը կարելի կլինի վերջացնել մի կես տարվա ընթացքում: Մենակ աշխատանքի ընթացքում պարզ եղավ նրա ամբողջ բարդությունը: Կամավորական շրջանի համար գլխավոր աշխատակիցն էր պ. Մ. Վալադյանը, գումարտակների համար - փ. գնդապետ Սերգեևը և հայկական զորամարմնի շրջանի համար - գլխապետ Աբազյանն ու Ս. Փիրումյանը:

Հանձնախումբը սկսեց աշխատել 1919 թվի հունվարի 20-ից: Պատմական նյութեր ու տվյալներ հավաքվեցին՝ Ազգային բյուրոյի, Ազգային խորհուրդի, Զինվորական խորհուրդի, Անդրանիկի, Համազասպի և այլ հնադարաններից:

Գլխապետ Աբազյանը ուղարկվեց Երևան Հայկական Զորամարմնի հնադարանից նյութեր քաղելու և ընդօրինակելու համար, որոնք նույնպես օգտագործվեցին զորավար Կուլեբյակինի կողմից: Առանձին զորամասերի վերաբերյալ նկարագրություններ տվին նախկին զորամասերի պետերից մի քանիսը և այդ նույնպես գործածվեց իբրև նյութ Հանձնախմբի կողմից: Զորավար Մորելը մանրամասն նկարագրություն տվեց «Երզնկայից մինչև Կարս» վերնագրով:

Հանձնախումբը շարունակեց իր աշխատանքները երեք ամիս մինչև 1919 թվի մայիսը, երբ նյութական միջոցների բացակայության պատճառով ստիպված էր ընդհատել իր աշխատանքները: Աշխատակիցները ցրվեցին, Հայկական ռազմական նախարարությունը, ծանոթանալով ձեռնարկված գործին, հանձն առավ հոգալ սկսված աշխատության ծախսերը: Մինչ այդ, Հանձնախմբի օրով պատրաստ էին արդեն մենակ Ա և Բ շրջանների որոշ առանձին մասերի նկարագրությունները, իսկ Գ շրջանը, որը ամենակարևորն էր, գրեթե չէր շոշափված:

Զորավար Կուլեբյակինը, որ արդեն նայում էր հանձն առած պատմական աշխատությանը իբրև իր հարազատ գործին և այդ գրական ավարտումը նկատում էր իբրև իր՝ հեղինակի պատվի ու ինքնասիրության խնդիր, ամբողջ մի տարի ևս շարունակեց իր աշխատանքը բացառապես ծանոթանալով հայոց առանձին զորամասերի և հայ-տաճկական կռվի պատմության վրա ռուս հեղափոխությունից հետո, չնայած որ զուրկ էր որևէ նյութական օգնությունից:

Այժմ զորավար Կուլեբյակինը, ընկնելով բոլշևիկների տիրապետության շրջանի մեջ, աշխատանքի խոշորագույն մասը կատարելուց հետո, այլևս կտրված է իր ուսումնասիրությունն ավարտելու հնարավորությունից: Քանի որ մենք զգում ենք ներկա ուսումնասիրության մեծ կարևորությունը մեր երիտասարդ զորականության պատմության, հայության մարտական ավանդների ու ժողովրդի գիտակցության ամրապնդման համար, մենք պիտի աշխատենք պատրաստել զորավար Կուլեբյակինից ստացված բնագիրները հայերեն տպագրության համար, հնարավոր եղածին չափ լրացնելով այն բացերն ու պակասավոր մասերը, որ մնացել են ընդհանուր նկարագրության մեջ նյութերի կամ ժամանակի պակասության պատճառով:

Զորավար Կուլեբյակինի բնագիրը մենք պիտի տանք անփոփոխ, նրան վերապահելով հեղինակի իրավունքներն ու պատասխանատվությունը: Երբ մեր կողմից մտցված փոփոխություններ, հավելումներ կամ լրացումներ լինեն, այդ ամեն անգամ առանձին մատնանշվի:

Ներկա ուսումնասիրությունը հետապնդում է ամենից առաջ ռազմապատմական նկարագրության նպատակներ. քաղաքական դեպքերը, հասարակական լայն հոսանքներն ու տրամադրությունները - այնքան տեղ են գտել այս ուսումնասիրության մեջ, որքան այդ անհրաժեշտ է ճակատի դրությունը հասկանալու համար: Այդ պատճառով ներկա ուսումնասիրության քաղաքական մասերից չպետք է սպասել ոչ մանրամասնություններ, ոչ էլ դեպքերի նկարագրություն:

Բուն ռազմապատմական նկարագրությունը դեռ շատ պակասավոր կողմեր ունի: Ամենից առաջ պետք է մատնանշել այն մանրամասնությունների բացակայությունը, որ տալիս են ամեն մի նկարագրության կենդանություն ու գունեղություն: Չկան, օրինակի համար, բազմաթիվ նշանավոր կռիվների մանրամասնությունները:

Լևոն ԼԻՍԻՑՅԱՆ

Երևանի բուսաբանական այգում բացվեց Էկոէպիկենտրոն

Սույն թվականի հունիսի 5-ին՝ Շրջակա միջավայրի համաշխարհային օրը, ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում բացվեց Հայաստանի կենսաբազմազանության տեղեկատվական և կրթական կենտրոնը՝ էկոէպիկենտրոնը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը շնորհավորեց բոլորին էկոէպիկենտրոնի բացման առթիվ և նշեց, որ Բուսաբանության ինստիտուտում սկսվում է զարգացման նոր շրջափուլ: Նա կարևորեց էկոէպիկենտրոնի դերը նոր սերունդների կրթության և դաստիարակության հարցում՝ շնորհակալություն հայտնելով Բուսաբանության ինստիտուտի աշխատակիցներին, բարերարներին, միջազգային կառույցներին, որոնք մեծ ներդրում են ունեցել Բուսաբանության ինստիտուտի և Երևանի բուսաբանական այգու՝ որպես ինստիտուտի անբաժանելի մասի պահպանման ու զարգացման մեջ:

Էկոէպիկենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան նաև Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Միխայել Բանցհաֆը, Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն Կարեն Մանվելյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Աննա Մազմանյանը, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն Անահիտ Ղուկասյանը:

Միջոցառմանը մասնակցեցին բնապահպաններ, գիտական հանրության, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, Երևանի բուսաբանական այգու այցելուներ: Նրանք ծանոթացան նորաբաց կենտրոնի ինտերակտիվ ցուցահանդեսի ցուցանմուշներին, կենդանի բույսերի հավաքածուին՝ կենսատոպերին, որոնք ներկայացնում են Հայաստանի հարուստ բուսական աշխարհը: Էկոէպիկենտրոնի աշխատակիցները ներկայացրեցին կենտրոնի առջև դրված հիմնական նպատակները՝ կենսաբազմազանության վերաբերյալ ուսուցում և հանրության տեղեկացվածության բարձրացում ցուցահանդեսների, էքսկուրսիաների, դասընթացների և դասախոսությունների կազմակերպման և կամավորների ներգրավման, ինչպես նաև համախոհ անհատների և կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով, ինչպես նաև Հայաստանի ֆլորայի տեսակների ex situ պահպանություն և ուսումնասիրություն:

Էկոէպիկենտրոնը ստեղծվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական աջակցությամբ, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի (WWF-Հայաստան) համագործակցության շնորհիվ: Ցուցահանդեսի բովանդակությունը և դիզայնը մշակվել

են Բուսաբանության ինստիտուտի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետազոտողների կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) կողմից ֆինանսավորվող «Շրջակա միջավայր» ծրագրի միջոցով: Շենքի վերանորոգումն ու կահավորումն իրականացրել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակը Վերականգնման վարկերի բանկի (KfW) միջոցով՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից ֆինանսավորվող Անդրսահմանային միացյալ քարտուղարության (TJS) ծրագրի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՍՊԱՍՎԱԾ ԴԱՍԱԳԻՐՔ՝ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղայանը Հայաստանի դպրոցների և գեղարվեստի ուսումնարանների աշակերտների համար գրել և հրատարակել է «Արվեստի պատմություն, կերպարվեստ» դասագրքի առաջին գիրքը:

Սա մեզանում նման դասագիրք ստեղծելու առաջին և հաջողված փորձն է: Դասագիրքը ներկայացնում է հնագույն շրջանի մարդկության ստեղծած արվեստի դրսևորումները՝ ժայռապատկերներ, կենդանիների ու մարդու պարզունակ քանդակներ: Դրանից հետո գալիս են բրոնզե դարը, անտիկ շրջանը, հելլենիզմը, միջնադարը մինչև Վերածնունդ:

Գրքի ներածության մեջ հստակ ու սեղմ ներկայացված է, թե ինչ է արվեստը և հիմնականում ինչ տեսակներ ունի՝ գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն: Կա նաև հետևյալ բնական հարցի պատասխանը՝ ինչի՞ համար է մարդը ստեղծել արվեստը:

Նախնադարյան մարդու արվեստի ընկալումները ներկայացված են նաև Հայաստանում պահպանված հնագույն արվեստի նմուշներով և նրանց տրված բացատրություններով:

Ովքեր եղել են Եվրոպայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Հայաստանի և այլ երկրների նշանավոր թանգարաններում, մեծ հաճույքով վերստին մտովի կտեղափոխվեն Փարիզի Լուվր, Նյու Յորքի Մետրոպոլիտեն, Հռոմի և Վատիկանի թանգարանները, կքայլեն Բեռլինի Պերգամոն և եգիպտական արվեստի թանգարաններում, կտեղափոխվեն Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահ ու գունագեղ նկարներով կտեսնեն այն, ինչը տեսել են սեփական աչքերով:

Այս դասագիրքը ակադեմիական ոճով է գրված՝ հստակ և պարզ, շարադրանքը տպավորիչ է ու մտապահվող, բերված փաստերն ու նրանց տրված բացատրությունները ճշգրիտ են:

Գրքում, մինչև եվրոպական Վերածննդի դարաշրջանը, ամփոփ ձևով ներկայացվում է հին Եգիպտոսի, Միջագետքի, որի մեջ մտնում են Շումերը, Աքքադը, Բաբելոնն ու Ասորեստանը, արվեստը: Առանձին ձևով ներկայացված են Ուրարտուն (Վանի թագավորությունը), Հին Հունաստանը, Հին Հռոմը, Հին ու հելլենիստական շրջանի Հայաստանը:

Արևելքի երկրներից ներկայացվում են Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, Իրանի կերպարվեստի նմուշները: Առանձնացված քննվում են Բյուզանդիայի, Ռուսաստանի ու միջնադարյան Հայաստանի քանդակագործությունը, որմնանկարչությունը, մանրանկարչությունը:

Մանրամասն ձևով բացահայտված է Արևմտյան Եվրոպայի ռոմանական ու գոթական կերպարվեստը:

Քանի որ սա դասագիրք է, ապա ամեն թեմայի վերջում դրված են թեմայի հիմնական էությունից բխող, նաև թեմայի յուրացումը ստուգող նպատակային հարցաշարեր, որոնք կօգնեն առարկան ավանդող ուսուցչին կամ դասախոսին ստուգելու, արդյոք ինքը հասե՞լ է նպատակին, թե՝ ոչ:

Հիանալի է, որ բոլոր դասերին կցված են համապատասխան ֆիլմեր, որոնք կցուցադրվեն դասի ընթաց-

➢8

ՍՊԱՍՎԱԾ ԴԱՍԱԳԻՐՔ՝ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

➢7 քում, և սովորողը վիրտուալ ձևով կտեսնի Ստոունհենջը, շումերների և աքադների մշակույթը, Եգիպտոսի սֆինքսը, Հին Ասորեստանը, Էրեբունի ամրոցի հնությունները, Հին Հունաստանը, Ակրոպոլիսն իր շրջապատի շինություններով, և այս կերպ են դասագրքի բոլոր դասերին ուղեկցող ֆիլմերը: Շատ մեծ ջանքեր են պահանջվել այդ ֆիլմերը գտնելու և դասագրքում համապատասխան թեմային կցելու:

Ով եղել է Հունաստանում և տեսել այդ չքնաղ երկրի պատմական հնությունները, ապա կվկայի, որ այդ երկրի հին ու միջնադարյան արվեստի գործերը հիմնականում թալանված են ու գտնվում են աշխարհի նշանավոր թանգարաններում: Հունական հնությունները պահպանվել են երկրի անմատչելի վայրերում, լեռների բարձունքների վրա: Դրանք են Միկենան, Դելֆին, Օլիմպիան, Մետեորան և նման եզակի մշակութային վայրեր: Հին Հունաստանի քանդակագործության մասին ֆիլմը, որն առկա է դասագրքում, այս առումով ստանում է բացառիկ արժեք:

Հիանալի է դասագրքում ներկայացված Վատիկանի թանգարանը՝ անտիկ հունական արվեստի մարմարե կրկնօրինակ քանդակներով: Նրանց բրոնզե բնօրինակները չկան, և Վատիկանի թանգարանի, Լուվրի մարմարե կրկնօրինակները ստանում են բնօրինակի արժեք:

Պատկերավոր ու անմոռաց ձևով է ներկայացված Լուվրի թանգարանում պահվող Սամոթրակյան Նիկեի քանդակը, որը Լուվրում զետեղված է առանձնացված, ճիշտ այնպես, ինչպես Միլոսյան Աֆրոդիտեի քանդակը, կամ Մոնա Լիզա՝ Լեոնարդո դա Վինչիի գլուխգործոցը:

Հելլենիստական Հայաստանից Բրիտանական թանգարանում կան Երիզայում գտնված Անահիտ աստվածուհու գլուխը և ձեռքը: Ձեռքը չկար 1986-ին, ավելացրել են հետո: Քանդակին կից մակագրությունը փոխվել է և չկա պարսկական աստվածուհի՝ գտնված Թուրքիայում գրությունը, սակայն չի գրված նաև, որ դա հեթանոս հայերի պաշտելի աստվածուհի Անահիտն է:

Պատշաճ ձևով է ներկայացված հելլենիստական Հայաստանի արվեստը՝ Տիգրան Մեծի դրամի պատկերով և Տիգրան Մեծի մասին պատմող ֆիլմով, ինչպես նաև Գառնիի հեթանոսական տաճարն ու դրա շրջակայքը ներկայացնող արժեքավոր նյութերով:

Արևելյան երկրների՝ Չինաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի արվեստը բոլորովին տարբեր է Հին Հունաստանից, Հռոմից, Հայաստանից: Կրոնական այլ պատկերացումները դրսևորվել են ինքնատիպ արվեստով, որոնց մեջ կան համաշխարհային արվեստի գլուխգործոցներ՝ ինչպես, օրինակ, Հնդկաստանի արվեստի փառքը դարձած Թաջ Մահալ մզկիթ-դամբարանը Ագրայում, որը կառուցվել է XVII դարում: Սա այն ժամանակահատվածն էր՝ 1632-1650-ական թվականներ, երբ Նոր Ջուղա տեղափոխված որոշ հայ մեծահարուստ առևտրականներ իրենց կապիտալը Շահ Աբասի մահից հետո տեղափոխում են Հնդկաստան: Եվ Թաջ Մահալը դամբարան է՝ նվիրված վաղամեռիկ ու դեռատի գեղեցիկ հայուհու: Գրքում կարդում ենք. «Շահ Ջահանի և Մումթազ Մահալի (բառացիորեն՝ «Պալատի զարդ») սիրո պատմությանը վերաբերող վարկածներից մեկի համաձայն՝ Մումթազ Մահալը, որի օրիորդական անունը Արջումանադ Բանու Բեգամ էր, ծագումով հայուհի էր՝ Պարսկաստանից Հնդկաստան եկած իսլամադավան հարուստ ընտանիքից» (էջ 132):

Մեր օրերի աշխարհի յոթ հրաշալիքներից երեքի նկարագիրը տրված է այս դասագրքում: Դրանք են՝ Հռոմի Կոլիզեումը, Չինական Մեծ պարիսպը և Թաջ Մահալը:

Ըստ ամենայնի ներկայացված է միջնադարյան Հայաստանի արվեստը՝ Մեծ Հայքի և Կիլիկիայի:

Քանդակագործության գլուխգործոցներ են Զվարթնոց տաճարի սյուների խոյակների վրա պատկերված արծիվները, կամ 915-921 թվականների Արծրունի Գագիկ Ա թագավորի՝ Ախթամար կղզու վրա կառուցված Սուրբ Խաչ եկեղեցին, որի պատերի վրա եղած մեծաքանակ ու բարձրարվեստ քանդակները հիացմունք են պատճառում: Դասագրքում կարդում ենք. «2007 թվականին Թուրքիայի կառավարության որոշմամբ տաճարը հիմնովին վերանորոգվել է» (էջ 205): Ես երկու անգամ եղել եմ այդ տաճարում, և երկու անգամ էլ տաճարը հսկող աշխատակիցներն ասել են, որ այն թուրքական է և ոչ մի կապ չունի հայերի հետ:

Աղասյանը դասագրքում բացատրում է միջնադարյան Հայաստանում լայն տարածում գտած որոշ գրքերի խորագրերի նշանակությունը՝ «Մաշտոց», «Ճաշոց», «Յայսմաւուրք» և այլն: Ընդհանրապես լուսանցքային մասնագիտական բառարանը հարուստ է:

Տպավորիչ են Անիի Մայր տաճարի, Տիգրան Հոնենցի պատվերով կառուցված տաճարի, Տաթևի վանքի, Արցախի Գանձասար վանքի, Գեղարդի ժայռափորի, Նորավանքի քանդակների ու նրանց տաղանդավոր ճարտարապետների մասին պատմող նյութերը:

Դասագրքի վերջին՝ Ե գլուխը, նվիրված է ռոմանական և գոթական կերպարվեստին, որոնք ծաղկում էին միջնադարյան Արևմտյան Եվրոպայում:

Բավական է այցելել Փարիզի եկեղեցիները, հատկապես Սեն Շապելը, և ընդհանրապես միջնադարյան Ֆրանսիան ներկայացնող թանգարանները, ապա լիովին գաղափար կկազմեք գոթական ոճի վերաբերյալ: Նույնը կարելի է ասել Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ավստրիայի, Մալթայի և զարգացած Եվրոպան ներկայացնող մյուս երկրների միջնադարյան եկեղեցիների մասին:

Արարատ Աղասյանը գրել է «Արվեստի պատմություն, կերպարվեստ» դասագրքի առաջին գիրքը, պարզ է, որ այն ունենալու է շարունակություն և ոչ թե երկրորդ գրքով, այլ ավելի:

Ցանկալի է, որ նոր գրքում տեղ գտնեն նաև Ամերիկյան մայր ցամաքի երեք զարգացած մշակույթների դրսևորումները՝ մայաների, ացտեկների և ինկերի:

Մեր օրերի աշխարհի յոթ հրաշալիքներից երեքը հենց այդ մայրցամաքում են՝ Չիչեն Իցան, Մաչու Պիչուն և Քրիստոսի՝ Ռիո դե Ժանեյրոյի հսկա հիասքանչ արձանը:

Ալիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՄԱՐԴԸ ԱՌԱՋԱՑԵԼ Է ԿԱՊԻԿԻՑ

Ձեր ուշադրությանը ներկայացվող ծաղրանկարները, որ արվել և հրապարակվել են ուղիղ 100 տարի առաջ, դեռ չափազանց մեղմ արտահայտությունն են այն համընդհանուր վրդովմունքի, զայրույթի և շփոթության, որ առաջացրին Դարվինի «Տեսակների ծագումը» գիրքն ու նրա էվոլյուցիոն տեսությունը:

Դարվինը հրավիրում է կապիկին թռչել օդակի միջով:

Դարվինը հույս ուներ, որ իր էվոլյուցիոն տեսության բնական ընտրության սկզբունքը դառնալու է ջահ, որ լուսավորելու և բացատրելու է մարդու առաջացման առեղծվածը: Սակայն այդ ջահը, լույս տալու փոխարեն, բոցավառեց վառոդի տակառը: Ինքնագոհ ու ինքնահավան բրիտանացիները չէին ուզում հաշտվել ու հավատալ, որ մարդիկ ինչ-որ ժամանակ ուրիշ տեսք ու կերպարանք են ունեցել, և որ նեանդերթալյան մարդը եղել է իրենց նախնին (ի դեպ. նեանդերթալյան մարդու կմախքը հայտնաբերվել է հենց այդ ժամանակ):

Վիեննական թերթերից մեկում 1882 թվականին տպագրված ծաղրանկարում կապիկները սգում են իրենց բարերար Չարլզ Դարվինի մահը... «Դարվինն այլևս չկա,- ողբում են կապիկները,- այսուհետ ո՞վ է պաշտպանելու մեր իրավունքները»:

Գրեթե բոլոր նրանք, որ հանդես եկան

էվոլյուցիոն տեսության դեմ, պարզապես չէին հասկացել Դարվինին և համոզված էին, թե նա ապացուցում է, որ ժամանակակից մարդն անմիջականորեն առաջացել է կապիկից:

Անգամ անգլիական պետական գործիչ Բենջամին Դիզրայելին, որ լայնախոհ ու չափազանց զարգացած մարդ էր, նույնպես համակվեց ընդհանուր թյուրիմացության այդ վարակով և ասաց. «Ըստ Դարվինի, մարդը կամ կապիկ է, կամ հրեշտակ: Ես, օրինակ, կգերադասեի իմ «հրեշտակային նախասկիզբը»:

Ի դեպ, էվոլյուցիոն տեսության շուրջ վեճերը շարունակվում են նաև այսօր. 1972 թվականին կրթության գործերով Կալիֆոռնիական խորհրդում բուռն վեճեր առաջացրեց այն պահանջը, որ երեխաներին պետք է ծանոթացնել ոչ միայն Դարվինյան էվոլյուցիոն տեսության, այլ նաև մարդու աստվածային արարման աստվածաշնչյան վարկածի հետ: Այս առաջարկը մերժվեց, սակայն խորհուրդը միաժամանակ առարկեց էվոլյուցիոն տեսության անվերապահ ընդունման դեմ:

1876 թվականին հրապարակված ծաղրանկարում կապիկը խնդրում է ընկերուհուն, կտրել իր պոչը: Նա շտապում է օր առաջ մարդ դառնալ:

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Ավ. Իսահակյան - Երկերի լիակատար ժողովածու, հ. XIII:
2. А. Манташян – Цепные реакции и сопряженные процессы.
3. E. Pogossian – Constructing models of being by cognizing.
4. «Լևոն Շանթ – 150», հոբելյանական գիտաժողովի զեկուցումների ժողովածու:
5. «Հովհաննես Թումանյան-150», հոբելյանական գիտաժողովի զեկուցումների ժողովածու:
6. «Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում»:
7. ՀՀ ԳԱԱ գիտական և գիտակազմակերպական գործունեության 2020 թ. հիմնական արդյունքներ, հաշվետվություն:
8. «Լեզու և լեզվաբանություն», 2020 թ. N 2:
9. Ա. Արևշատյան – Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դարեր:
10. «Բանբեր հայագիտության», 2021 թ. N 1:
11. «Հայկական տնտեսագիտական հանդես», 2021 թ., N 1:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը հայտարարում է մրցույթ «Հոգեբանության» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության կանոնակարգի»՝ մրցույթին կարող են մասնակցել գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք:

Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կադրերի բաժին (ք. Երևան, Բաղրամյան 24դ, 4-րդ հարկ. 4.6 սենյակ) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում՝ ուղղված ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենին,
2. անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
3. կադրերի հաշվառման անձնական թերթիկ.
4. քաղվածք աշխատանքային գրքույկից,
5. համառոտ ինքնակենսագրություն.
6. բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) պատճենը.
7. գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հաստատող փաստաթղթերի պատճենները.
8. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը (հաստատված ուսումնական հաստատության գիտքարտուղարի կողմից),
9. գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման ամսաթվից մինչև 2021 թ. հուլիսի 29-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10.30-13.00:

Մրցույթը տեղի կունենա ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստում՝ 2021 թ. սեպտեմբերի 6-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կադրերի բաժին. ք. Երևան, Բաղրամյան 24դ. 4-րդ հարկ. 4.6 սենյակ: Հեռ. (060) 62-35-19 (3-53)

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 30.06.2021 թ.:

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА